ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՆՏԻՊ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Ե. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

Դանիել Վարուժանի ստեղծագործության մասին հարուստ գրականություն է ստեղծվել։ Դեռևս հեղինակի կենդանության օրոք հրապարակվեցին Ա. Զոպանյանի, Ա. Հարությունյանի, Մարգարի հիանալի գրախոսությունները։ Հետագայում, բանաստեղծի եղեռնական մահից հետո, թե՛ սփյուռքում և թե՛ Հայաստանում տպագրվեցին գրքեր և բազմաթիվ հոդվածներ։ 1919 թ. Կ. Պոլսում լույս տեսավ Լ. Էսաճանյանի «Դանիել Վարուժան» գիրքը, 1940 թ. Բուխարեստում՝ Վարուժանի մտերիմ ընկեր Հ. Սիրունու «Դանիել Վարուժան» ուշագրավ մենագրությունը, վեց տարի անց, մեզ մոտ՝ Գր. Սարդսյանի «Վարուժանի ստեղծագործական կյանքը» բրոշյուրը, ավելի ուշ՝ 1961 թ. հրապարակվեցին Հ. Ղանալանյանի և Հ. Ռշտունու մենագրությունները, այնուհետև՝ Ստ. Թոփչյանի Վարուժանի ստեղծագործություններին նվիրված հոդվածաշարքը։ Բանաստեղծի նկատմամբ այս բուռն և չմարող հետաքրքրությունը, անշուշտ, պետք է վերագրել նրա ստեղծագործությունների գաղափարական հարստությանը, այնտեղ արծարծված հարցերի կենսականորեն կարևոր, համազգային բնույթին և արտացոլման ինքնատիպ, բարձր արվեստին։ Հիշատակված գրականագետները քննության են առել Վարուժանի կամ բանաստեղծությունների առանձին ժողովածուները (Ա. Զոպանյան, Ա. Հարությունյան, Մարգար, Հ. Օշական) և կամ ողջ ստեղծագործությունը (Լ. Էսաճանյան, Հ. Սիրունի, Հ. Ղանալանյան, Հ. Ռշտունի, Ստ. Թոփչյան)։ Եվ ինչպես պետք էր սպասել, նրանք բոլորն էլ սկսել են բանաստեղծի առաջին տպագիր գրքից՝ «Սարսուռներից»։ Վարուժանի արխիվի բացակայության պատճառով առ այսօր մեր գրականագետների տեսադաշտից դուրս են մնացել նրա նախասարսուռյան շրջանի ստեղծագործությունները։

1963 թ. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը Նյու-Յորքից, բանաստեղծի հարազատներից ստացավ նրա հարուստ արխիվը, որտեղ խնամքով պահպանվել են Վարուժանի բանաստեղծական առաջին թռթռվանքները, քերթվածների սևագրությունները, մաքրագիր օրինակները, մշակումները։ Այս ամենը նոր լույս է սփռում Վարուժանի մեզ անծանոթ ստեղծագործական աշխարհին, բացահայտում բանաստեղծի վաղ շրջանի խոհերն ու հակումները։

Դ. Վարուժանի 1901—1904 թթ. գրած գրեթե բոլոր բանաստեղծությունները թվակիր են, իսկ 1909 թ. հրատարակած «Ցեղին սիրտը» գրքում զետեղված քերթվածների մեծ մասի ոչ միայն տարին, այլև գրելու օրն էլ է նշված։ Մեծատաղանդ բանաստեղծի գրական նախափորձերը սկսվել են 1901 թ. առաջ։ Նրա այս շրջանի բանաստեղծությունները անթվակիր են և կատարման ար-

վեստով կասկած չեն հարուցում, որ գրված են 1900 թ. կամ դրանից փոքր-ինչ առաջ։

Ամենայն հավանականությամբ՝ Վարուժանը բանաստեղծական առաջին փորձերը կատարել է Պոլսում, Քաղկեդոնի Մխիթարյան վարժարանում ուսանելու տարիներին (1898—1901)։ «Ծաղկեվունջ կամ բրգնիկցիի մը նվագները». այսպես է կոչվում նրա բանաստեղծությունների առաջին ձեռագիր ժողովածուն, որ հեղինակը նվիրել է Սեբաստիայի թեմի հոգևոր առաջնորդ Ս. Վ. Հաճյանին. «Այս փնջին ծաղիկներուն մեջ հոգիս ու սիրտս խառնած եմ, ես ծաղիկը շատ կսիրեմ և կուզեմ որ ձոնս ալ ծաղիկ մը ըլլա. չեմ գիտեր՝ թե գարնան այդ վաղաթորշամ ժպիտն ալ ղիս կը սիրե՞... Մոտայեն (գեղատեսիլ ծովափընյա վայր է Պոլսում— Ե. Պ.) ներշնչված երգեցի տխուր և զվարթ, ժպիտով ու արցունքով հոգիս՝ մանուկ զգացումներով, սիրտս ալ անկեղծ սիրով մ՝ առլեցյալ, երգեցի պահ մը, բայց գրիչս, գիտեմ, չի կրցավ ի հայտ ածել այդ սերն ու զգացումն, զի տակավին թերավարժ է ան, տակավին ձեռքիս մեջ դասագիրքն ունիմ և մատներուս վրա մելանի բիծեր»[1]— գրում է պատանի բանաստեղծը ժողովածուի ընծայականում։ Սրան հաջորդում է Վարուժանի հայոց լեզվի և գրականության սիրելի ուսուցիչ Արիստակես Քասկանդիլյանի ջերմ առաջաբան-հանձնարարականը. «Պե՞տք է ըսել թե երիտասարդ, բայց խոստմնալից մտքի մը առաջին թերթերն են այս «Ծաղկեփունջը կամ բրգնիկցիի մը նվագները»։ Ջարհամարհե՛նք։ Երկնքի ցոլերուն դեռ քանի մը շողշողուն կաթիլներովը կըզվարթացնե մեզ, գուշակել կուտա մեզի ապագային ավելի խոր երևակայության մը նվագները։

Քաջալերինք։ Թերթեցի զանոնք հաճությամբ և խրախույս ժպիտով մըն է, որ կը գրեմ անոնց համար այս երկու բառս և կհանձնարարիմ ազնիվ ու գթոտ քննադատության— Հ. Ա. Ք.»[2]։

«Ծաղկեփունջ կամ բրգնիկցիի մը նվագները» ժողովածուն բաղկացած է երկու մասից։ Առաջին մասն ընդգրկում է 12 (ԺԲ) երգ-բանաստեղծություն։ Ժողովածուի խորագիրը հիանալիորեն արտահայտում է խոստումնալից բանաստեղծի երգած մոտիվները. դրանք սրտաբուխ երգեր են՝ նվիրված ծաղիկներին, բնությանը, գեղեցիկին։ Այստեղ Վարուժանը պատանեկան եռանդով, կարծես, մշակել է մի ծաղկաշատ պարտեզ, բուրմունքաշատ ծաղիկների մի գեղեցիկ փունջ և նվիրել ընթերցողին։ Մեր միջնադարյան գրեթե բոլոր բանաստեղծների մոտ ծաղիկների գովքը տիրապետող մոտիվ է եղել։ Երգել ծաղիկներին, ասել է թե փառաբանել մայր բնությունը, կյանքը, սերը, գեղեցիկը, լավը, վսեմը։ Գաղափարական նույն ելակետն է ունեցել նաև Վարուժանը և պատահական չէ, որ նա «Ծաղկեփնջի» ոտանավորները խորագրել է Երգ։ Ժողովածուն ընդգրկում է «Դափնեվարդ», «Շուշան», «Նարգես», «Հասմիկ», «Մեխակ», «Անմոռուկ», «Թշվառ լեռնակ», «Հակինթ», «Կովածաղիկ», «Խնձորածաղիկ», «Մանուշակ» երգ-բանաստեղծությունները, որոնք գրված են պատանեկան անկեղծությամբ, սկսնակին բնորոշ լեզվական, տաղաչափական,

---

1 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Դանիել Վարուժանի ֆոնդ, թղթապանակ № 1։ Հոդվածի բոլոր մեջբերումները այստեղից են։

2 Նույն տեղում։ Վարուժանը 1902 թ. ցանկացել է «Ծաղկեփունջը» հրատարակել. գրքույկի բոլոր էջերում կա գրաքննության թույլտվության կնիքը։ Սակայն նյութական սուղ միջոցները հնարավորություն չեն ընձեռել տպագրության։ Այս մասին տե՛ս նաև «Սովետական գրականություն», 1972, № 9։

պատկերավորման և այլ կարգի թերացումներով։ Գովերգելով յուրաքանչյուր ծաղկի գեղեցկությունը, Վարուժանը բանաստեղծությունը հարստացրել է իր անձնական խոհերով ու հույզերով։ Այս առումով բնորոշ են «Անմոռուկ» և «Մնիակ» երգ-բանաստեղծությունները.

Արշալույսին արտասվաց մեջ
Պանծա՛, ծաղիկդ, ո՞վ անմեռուկ,
Հրեշտակներու դեմքերին պերճ
Ինկած ժըպիտ մ'ես անմեղուկ*։

Աչքերդ բացած այգուն, այգուն՝
Է՞ր կը շըրջես աստին, անդին,
Սոխակն արդյոք քո անուշ քուն
Խանդարե՞ց իր երգով թրթռուն։

... Ինչպես որ դու անթառամ ես,
Եվ թերթերդ չեն ծերանար,
Սիրտն ալ Անոր՝ միշտ սիրակեղ
Եվ միշտ վառ է, բարեաց ծըրար։

Եռ ու եփով աշխատության
Հար տոքորված՝ լավն ու բարին
Խորհե՛, դործե՛, և տըքնի Ան
Ուժովն համայն, մըտքին, կամքին։

«Ծաղկեփունջ» բանաստեղծությունների շարքում նկատելի է տենչացող, վշտահար պատանի բանաստեղծի թախծոտ կերպարը։ Այս առումով բնորոշ է չքնաղ «Նարգեսին» նվիրված երգի վերջին քառատողը.

... Տենչանքը ոսկեղեն,
Անուրջի մը հուակեն՝
Որ օր մըն ալ ավա՞ղ,
Պի՛տ թոշնի քեզ պես։

«Ծաղկեփունջ կամ բրգնիկցիի մը նվագները» բանաստեղծությունների ժողովածուի երկրորդ մասը սկսվում է «Մայիս» («Արշալույս մը հազիվ բացված») բանաստեղծությամբ, որից հետո ձեռագիրն ընդհատվում է։ Սակայն նույն «Մայիս» բանաստեղծությունը գտնում ենք Վարուժանի դարձյալ անթվակիր բանաստեղծությունների մի այլ շարքում[3]։ Այս փաստն արդեն ապացուցում է, որ մենք գործ ունենք «Ծաղկեփունջի» երկրորդ մասի հետ և հաստատում, որ ժողովածուի բոլոր բանաստեղծությունները մեզ հասել են լրիվ։ Այս մասը ևս բաղկացած է 12 բանաստեղծությունից և «Սիրտս» նախերգից։ Եթե առաջին-մասում բանաստեղծի քնարական հերոսները ծաղիկներ էին, ապա այստեղ մարդն է՝ սիրուհին։ «Ծաղիկ աղջիկ, կույսին սեր»— ահա ժողովածուի այս բաժնի մոտիվները։ Երկրորդ մասը սկսվում է ինքնաբնութագրական «Սիրտս» բանաստեղծությամբ, որը բացահայտում է բանաստեղծի քնարական հերոսի հուղաշխարհը։

3 ԳԱԹ, Դանիել Վարուժանի ֆոնդ, թղթապանակ № 3։
* Բնագրում՝ «անմեղուկ»։

... Սիրտս է սև նոճեաց լուսնեակը տրխուր՝
Որ աղոտ լույսով կը պըլպլա տժգույն,
Եվ գիտե միայն արտասուքի մեջ լուռ
Դգվե շիրիմներն սրգալ անոնց վրա։

Սիրտըս մատեան մ'է բազմաթերթ, խոշոր,
Որոյ առաջին երեսին վրա ճիշտ
Արյուն-արտասուքով քանդակված է խոր
Կյանքիս այս երկու բառերն Սեր և Վիշտ։

Սիրտըս քընար մ'է, սիրո, սուգի քնա՞ր,
Որ աղեղ լարված՝ միայն կը հեծկըլտա,
Անույշ ու զվարթ թրթռալու համար
Ժըպիտ մը, շունչ մը պետք է անոր վրա։

Սիրտս է՝ դալկահսար ծաղիկ մը աշնան
Զոր կույս մը բընած մատերուն մեջ յուր
Մեծ հաճույքով մի ո՞հ, կը փեթրե զայն
Ու թերթերն հովին կը հանձնե ի սփյուռ։

«Համբույր մը», «Անցա հազար անդամներ», «Քեզի համար», «Փունջ մը շուշան», «Սիրո արցունքներ», «Բառ մը», «Իղձ» և այլ բանաստեղծություններում երգվում են պատանեկան ամոթխած առաջին սիրո սարսուռները, խինդը, կարոտը, տենչանքը։ Բանաստեղծը երգում է ապրված հույզեր և զգացումներ, նրա քնարական հերոսը կենդանի, շոշափելի բնավորություն է։ Վարուժանի նշված բանաստեղծությունները աչքի են ընկնում կատարման թեթևությամբ։ Նա առանց ելնելի պատկերում է քնարական հերոսին համակած նվիրական պահը՝ առաջին համբույրը, սիրո առաջին բառը, արցունքները։ Շարքի հաջողված բանաստեղծություններից է «Անցա հազար անդամները».

Պատուհանիդ ես տակեն
Անցա հազար անդամներ,
Հոգիս հույսով մը կայրեր,
Քեզ տեսնելու փափագեն։

Հոն չերևացար դու բընավ,
Դեղձանիկը կար միայն,
Թովված քեզմե՝ կերգեր ան
Քնարիս հետ, տխուր սևավ...

Օր մ'ալ անցա այդ տեղեն
Ըստվերի պես, կանուխ էր.
Հաղիվ արփույն ճաճանչեր
Կը փըթթեին լուսեղեն։

Նետեցի աչք մը անձկավ,
Հոն էիր դուն նույն օրն այն
Հուրիի մը ճիշտ նըման,
Դյութիչ տեսքով մ'հոգեզրավ։

Տեսածիդ պես զիս մեկեն
Ծածկվեցար անգո՞ւթ սեր,
Վարագույրիդ ժանյակներն
Ա՜խ, բաժնեցին քեզ ինձմեն։

Անկեղծ, ջերմագին սիրո խոստովանանք է «Քեզի համար» քերթվածը, որ, ասես, մերժված սիրո մի տխուր եղերերգ է.

Իղձերս ամեն, խոստումներս ալ ճշմարիտ՝
Մեծ հույսով մի ոտքիդ առջև դրի ես,
Չի զլացա քեզ՝ ոչ հառաչ, ոչ ժրպիտ,
Բայց ա՜հ, բընավ, չի ճանչցավ դիս, սիրտդ վես։

Քեզի համար նույնիսկ հողիս զոհ ընել
Ես ուխտեցի երկնից առջև, աստեղ տակ,
Թույլ չտվիր ինձ՝ քու շունչդ վայելել
Չի ճանչցար դիս երբե՛ք, երբե՛ք, ո՜վ հոդեակ...։

Սեր-քընարիս լարերն միայն քեզ համար
Թրթրցուցի, քեզ երդեցի հեծումով,
Ա՜հ, սրփռեցի քղանցքիդ արցունք անհամար
Ցույց չի տվեր դու ինձ ոչ դութ, ոչ գորով։

Դեմքիդ նրման մեղրու նըշույլ դեմ լուսնին
Մենիկ նըստած՝ լացի քանի՜ դիշերներ,
Ի գութ շարժած կո՞ւլար լուսնակն ալ լըռին
Խոր իրր անդունդ հոգիս միայն ցամքած էր։

Այս ամենուն վրրա, անգութ, չունեցար
Արտասուք մը, բառ մը, ժրպիտ մ՝իսկ լըռիկ,
Չի բացիր ինձ երբեք գիրկրդ սիրավառ.
Չինկան սըրտես նայվածքրդ խոր թափանցիկ։

Ուրեմն զա՜րկ, սըրտիս խոր քու դաշույն,
Պատռե՛, ճեղքե՛, բաց ծալքերը ի կարդա,
Հոն արյունե մեծ տառերով քու անունդ
Քանդակված է. քեզ սիրելուս լոկ վրկա։

Սիրո և բնության ձոներգեր են «Չքնաղագեղ Շուշանիկ», «Առ Արուսյակ», «Մայիս», «Առ ցողիկն ի վարտի» բանաստեղծությունները։ Ջնջումներով, փոփոխություններով և ուղղումներով (երբեմն անընթեռնելի) են «Մրմունջներ» խորագրով երեք ոտանավոր, ինքնակենսագրական բնույթի «Ծղբայրներուս և քույրերուս շիրիմին վրա» ոտանավորը։

«Ծաղկեփունջ» բանաստեղծությունների շարքը աչքի է ընկնում հստակ, մաքուր լեզվով, բանաստեղծական այլ և այլ ձևերի (համեմատություն, դիմառնություն, երկխոսություն) առկայությամբ, որոնք բացահայտում են հեղինակի ստեղծագործական ակնհայտ շնորհքը, խոստումնալից ապագան։ Այդուհանդերձ, «Ծաղկեփունջը» զերծ չէ գաղափարական-գեղարվեստական թերություններից, որոնք պայմանավորված են Վարուժանի ապրած ժամանակաշրջանով, միջավայրով, ինչպես նաև նրա պատանի հասակով ու դաստիարակությամբ։ Այսպես, «Հասմիկ», «Կռվածաղիկ» բանաստեղծություններում արտահայտված են հեղինակի կրոնական նախապաշարումները։ Ժողովածուի որոշ բանաստեղծություններ էլ տառապում են ձգձգվածությամբ («Թշվառ լեռկան»), տաղաչափական պարզունակությամբ («Կռվածաղիկ») և այլն։ Թերություններ, որոնք բանաստեղծի մտավոր, ստեղծագործական հասունությամբ աստիճանաբար հաղթահարվում են, որը նկատելի է անգամ ժողովածուի առաջին և երկրորդ մասերը համեմատելիս։

Այսպիսով, մինչև «Սարսուռների» հրապարակ գալը (1906 թ.) Վարուժանը անցել է ստեղծագործական մի հետաքրքրական և ուրույն ճանապարհ, որի հաստատումն է «Ծաղկեփունջ կամ բրգնիկցիի մը նվագները» ժողովածուն։

ПЕРВЫЙ НЕОПУБЛИКОВАННЫЙ СБОРНИК СТИХОВ ДАНИЭЛА ВАРУЖАНА

Е. М. ПЕТРОСЯН

Доктор филологических наук

Резюме

Отсутствие архива Д. Варужана до сих пор нам не давало возможности иметь ясное представление о раннем периоде творчества поэта. В 1963 г. Музей литературы и искусства им. Чаренца получил из Нью-Йорка богатый архив Д. Варужана, который наряду с другими материалами содержит также неопубликованный сборник стихов «Цахкепундж» («Букет»), написанный им в школьные годы (1898—1901 гг.). Сборник состоит из двух частей, каждая из которых охватывает 12 стихотворений. Стихи первой части посвящены воспеванию природы, цветов, вторая же часть сборника в основном включает в себя лирические песни о любви.